

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Միածնաէջ Սուրբ Սեղանեն, լույս ուրախությամբ կբերենք Ձերդ Սրբության մեծ ավետիսը հրաշափառ Հարության Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի, որ խաչափայտին վրա խափանեց մեղքը և իր դատարկ գերեզմանով հաղթեց մահվան, ցույց տալով մարդկության, մեկի ամենուս՝ ճանապարհը փրկության, ճանապարհը անանց կյանքի:

Այս սուրբ ժամուն Մեր մաղթանքն է որ մեր Եկեղեցվո զավակները իրենց սրտերը լայն բացած, քաղցրությամբ ընդունին կենարար շնորհները Զատկական՝ հառավել շինություն իրենց հոգիներուն, հառավել կենսագործում Ավետարանի պատվիրաններու իրենց ընտանեկան և ընկերային կյանքին մեջ:

«Զի թոշակն մեղաց մահ է, այլ շնորհքն Աստուծոյ կեանք յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռոմ. Զ 23):

Մեր եղբայրական սիրո ողջույնը Ձերդ Սրբության, տիրախնամ պատմական Աթոռիդ ուխտապահ միաբանության և համայն հայ հավատացյալ ժողովուրդին:

Սիրելիք Մեր, Զատիկ է այսօր՝ «գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ. ի բաց արասցուք այսուհետև զգործսն խաւարի, և զգեցցուք զլոյսն լուսոյ» (Հռոմ. ԺԳ 12): Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից ողջույնքներով գեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց կանանց կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ըստացված պատասխան շնորհավորականների համար: